ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 փետրվարի 2014թ. թիվ 33-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» ենթակետը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. «ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի N 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի վերաբերյալ ՀՀ Լոռու մարզպետի 27.12.2013թ. թիվ 352-Ա որոշմամբ հարուցված վարչական վարույթը կարճել՝ նշված դպրոցի տնօրենի գործողություններում խախտում չհայտնաբերելու հիմքով:

2. Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ.Սայադյանին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59 հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել Լ.Հարությունյանին՝ առձեռն հանձնելու միջոցով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2014թ. փետրվարի 5
ք.Վանաձոր